

նիստի արձանագրության քաղվածք

Հիմք ընդունելով Երևանի Վ. Բրուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի ամբիոնների և ֆակուլտետների դասախոսների վարկանիշի վերաբերյալ կարգը և ամբոնների կատարած վերլուծությունները իրենց դասախոսների վարկանիշերի վերաբերյալ, ինչպես նաև ամբիոնների կողմից ներկայացված աշխատավարձերի բարձրացման տեղեկանքները՝ հանձնաժողովը որոշեց

- 1.1 Հաստատել ամբիոնների կողմից ներկայացված աշխատավարձերի բարձրացման տեղեկանքները:
- 1.2 Ներկայացնել դրանք զարգացման գծով պրոռեկտորին և ուսումնական մասի վարիչին՝ նպատակ ունենալով բարելավել դրանք, հաշվի առնելով ա/թ սեպտեմբերի 1-ին անցկացվելիք վարկանիշերի վերանայումը և վերահաշվարկը աշխատավարձի ֆոնդի հաստատված 20% աճի շրջանակներում:
2. Ուսումնաօժանդակ ծառայողների (լաբորանտների) աշխատավարձի բարձրացումը կատարել՝ ըստ աշխատանքային փորձի այն է՝ ա) մինչև 1 տարի աշխատանքային փորձ ունեցող բ) մինչև 10 տարի աշխատանքային փորձ ունեցող և գ) 10 տարուց ավել աշխատանքային փորձ ունեցող, ինչպես նաև հաշվի առնել ամբիոնների կարծիքները այդ ուսումնաօժանդակ ծառայողների վերաբերյալ:
3. Վարչական աշխատակազմի աշխատավարձի բարձրացումը կատարել հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր բաժնի աշխատավարձային ֆոնդի բարձրացում 20%-ի չավել, որն էլ ստորաբաժանման ղեկավարը տրոհելու է աշխատակիցների միջև՝ ըստ պիտանելիության, ավանդի, դերի և այլն:
4. Ղեկավար վարչական անձնակազմի աշխատավարձի բարձրացումը կատարել 0-ից մինչև 30%՝ ելնելով պիտանելիությունից, կատարած աշխատանքի ծավալից և որակից:

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի քարտուղար՝



Ս. Զոլյան

Ն. Ներսիսյան